

**«ԿԱՆԹԵՂ» ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Բառապաշարի գործնական կիրառության
կարողությունների զարգացումը հիմնական դպրոցում

ՀՀ Լոռու ՀՀ Լոռու մարզի Ձորամուտի միջնակարգ
դպրոցի անգլերենի ուսուցիչ
Ռիմա Հարությունյան

2023թ

Ներածություն

Ամեն մի լեզու ունի իր բառերը, որոնց թիվը կարող է հասնել մի քանի հարյուր հազարի: Դրանց ամբողջությունը տվյալ լեզվի բառապաշարն է: Հայերենը, օրինակ, ունի ավելի քան 300 հազար բառ: Այդ բառերը հավասար արժեք և միանման գործածություն չունեն: Կան համեմատաբար հաճախ և հազվադեպ գործածվող բառեր: Տվյալ լեզվի բոլոր բառերի ամբողջությունը կոչվում է բառապաշարային կազմ կամ լեզվի բառային կազմ:

Ամեն մարդ յուրացնում և գործածում է լեզվի բառապաշարի մի մասը միայն: Ամեն անհատ միջին հաշվով գիտի, հասկանում է 20-25 հազար բառ և գործածում է դրանցից 3-4 հազարը: Բայց բոլոր մարդիկ նույն բառերը չէ, որ գիտեն և գործածում են: Մոտ 2000 բառ բոլորի բառապաշարում համընկնում է: Մնացածը տարբեր է լինում թե՛ քանակով, թե՛ կազմով՝ կախված մարդու մտավոր զարգացման մակարդակից, կրթությունից, զբաղմունքից, հետաքրքրություններից, միջավայրից ու շփումներից: Մեկ մարդու իմացած և գործածված բառերի ամբողջությունը կոչվում է տվյալ անհատի բառապաշար:


Նույնը վերաբերում է նաև օտար լեզու սովորելուն: Յուրաքանչյուրի բառապաշարը ավելանում է տարիքի հետ և դառնում հաղորդակցման կարևորագույն զենքը:

Բառապաշարը լինում է ակտիվ և պասիվ: Ակտիվ բառապաշարը ներառում է այն բառերը, որոնք օգտագործվում են տվյալ մարդու կողմից իր առօրյա կյանքում իր ամենօրյա պահանջմունքները բավարարելու համար: Իսկ պասիվ բառապաշարը կազմում են այն բառերը, որոնք մենք հասկանում ենք, երբ լսում կամ կարդում ենք, բայց չենք կիրառում մեր առօրյա կյանքում: Այս վերաբերվում է ինչպես մայրենի լեզվով խոսողներին, այնպես էլ սովորողներին: Կան բազմաթիվ բառեր որոնք պարբերաբար օգտագործվում են թե՛ գրելուց և թե՛ խոսելիս: Այսպիսի բառերը մեր ակտիվ բառապաշարն են կազմում, իսկ այն բառերը որոնք մենք լսում ենք հեռուստացույցով կամ մեկ այլ վայրում և չենք կիրառում այն, համարվում է պասիվ

բառապաշար: Կարելի է նշել, որ կարևորագույն խնդիր է այն միջոցների մշակումը, որոնք կհեշտացնեն լեզվի ուսուցումը

Բառապաշարի կիրառումը

Բառապաշարի կիրառումը կարող ենք դիտարկել հետևյալ սխեմաներում:



Գոյական անուն: Քերականական կարգերը՝ հայերենում, ռուսերենում, անգլերենում, ֆրանսերենում, իսպաներենում

Գոյական են կոչվում այն բառերը, որոնք անվանում են առարկա կամ առարկայացված հասկացություն՝ օրինակ՝ տուն, քար, (հայերեն) life, music (անգլերեն) дети, собака (ռուսերեն) abre, libro (իսպաներեն), ami, fabrique (ֆրանսերեն): Ինչպես յուրաքանչյուր խոսքի մաս, այնպես էլ գոյականը ունի իրեն բնորոշող հատկանիշները: Տվյալ լեզուներում գոյականն ունի ինչպես ընդհանուր հատկանիշներ, այնպես էլ տարբերվող:

Հայերենում գոյականն ունի հետևյալ հատկանիշները՝ թիվ, առում (առկայացում) եւ հոլով, ռուսերենում գոյականն ունի՝ թիվ, սեռ, հոլով, իսպաներենում՝ թիվ, սեռ, առում, ֆրանսերենում՝ թիվ, առում, սեռ, անգլերենում՝ թիվ, սեռ, հոլով, առում:

Քեր.կարգ լեզու	թիվ	առում (առկայացում)	հոլով	սեռ
հայերեն	+	+	+	—
անգլերեն	+	+	+	—

Գոյականի թվի կարգը ցույց է տալիս գոյականի արտահայտած առարկանների քանակը: Այս բոլոր լեզուներում կա երկու թիվ՝ եզակի եւ հոգնակի: Հայերենում գոյականին ավելանում են՝ -եր/ներ/իկ/ք/այք,ինք, անգլերենում՝ *s/es*, ռուսերենում *ы/и/я/а/е*, ֆրանսերենում՝ *s*, իսպաներենում՝ *s/es* վերջավորությունները: Իհարկե բոլոր լեզուներում էլ կան բացառություններ, որոնց հոգնակին կազմվում է այլ կերպ, սակայն դրանց չենք անդրադառնա:

Օրինակ՝

Հայերեն		
եզակի	Հոգնակի	
գիրք	Գրքեր	
սեղան	Սեղաններ	
մարդ	Մարդիկ	
Անգլերեն		
Եզակի	հոգնակի	
Cat	cats	
Fox	foxes	
Man	men	

Գոյականի առկայացման առումի կարգը ցույց է տալիս գոյականի հայտնի կամ անհայտ լինելը տվյալ իրադրությունում, այսինքն գոյականն ունի երկու կարգ՝ որոշյալ եւ անորոշ: Այս քերականական կարգը կա հայերենում, անգլերենում, ֆրանսերենում եւ իսպաներենում: Ինչ վերաբերում է ռուսերենին՝ ապա ռուսերենում գոյականը նման հատկանիշ չունի, սակայն ЭТО, ЭТОТ, ТОТ եւ նման այլ օգնական բառերի օգնությամբ արտահայտում են գոյականի որոշիչաւորւթյունը:

Օրինակ՝

Հայերեն	
որոշյալ	Անորոշ
գիրք	գիրքը/ս
մի մարդ	մարդը/ս

Անգլերեն	
Որոշյալ	անորոշ
the book	a book
the cat	a cat

Գոյականի սեռի կարգը հիմնականում լինում է՝ իգական եւ արական, սակայն անգլերենում եւ ռուսերենում առանձնացնում են նաեւ չեզոք սեռ, իսկ անգլերենում գոյականը չունի նման հատկանիշ, միայն որոշ մասնագիտությունների եւ պաշտոն ցույց տվող գոյականներն ունեն սեռ, սակայն մեծ մասի մոտ բացակայում է: Օրինակ՝

Հայերեն

իգական	արական	Չեզոք
_____	_____	_____
ուսանող	ուսանողուհի	

Անգլերեն		
իգական	Արական	չեզոք
_____	_____	_____

Գոյականի հոլովի կարգը արտահայտում է գոյականի կապակցական փոփոխությունների համակարգը: Առարկա, հատկանիշ, գործողություն, ինչպես նաև քերականական հարաբերություններ ցույց տվող բառերին կապակցվելու համար գոյականները որոշակի ձևերով փոփոխվում են: Գոյականի հոլովի կարգը կա հայերենում, ռուսերենում, անգլերենում, իսկ իսպաներենում եւ ֆրանսերենում հարաբերությունները գոյականի եւ այլ խոսքի մասերի միջեւ արտահայտվում են նախդիրների միջոցով:

Օրինակ՝

Հայերեն	
ուղղական	գիրք(ը)
սեռական	Գրքի
տրական	գրքի(ն)
հայցական	գիրք(ը)
բացառական	Գրքից
գործիական	Գրքով

ներգոյական	Գրքում
Անգլերեն	
nominative	boy
possessive	boy's
objective	boy

Բառապաշարի ուսուցման վարժություններ

Բառապաշարին տիրապետելը անհրաժեշտ է, որպեսզի մենք կարողանանք հասկանալ մեր կարդացածը կամ լսածը: Լսելը և կարդալը ռեցեպտիվ գործողություններ են: Իսկ պրոդուկտիվ խոսքային գործողությունների ժամանակ մենք ստիպված ենք մեր բառապաշարից ընտրել համապատասխան բառը մեր մտքերն արտահայտլու համար: Այսպիսով խոսելը և գրելը պրոդուկտիվ խոսքային գործողություններ են: Ուստի առանձնացնում են բառապաշարի ուսուցանման վարժությունների երկու հիմնական տեսակ

Վարժություններ, որոնց նպատակն է ռեցեպտիվ ունակությունները զարգացնել

Վարժություններ, որոնց նպատակն է պրոդուկտիվ ունակությունները զարգացնել
Ռեցեպտիվ վարժությունների տեսակները

Այս վարժությունների նպատակն է զարգացնել սովորողների ռեցեպտիվ ընդունակությունները, որոնք էլ իրենց հերթին օգնում են սովորողին հեշտությամբ հասկանալ բառեր և տեքստեր, ձեռք բերել տեղեկատվություն և այլն: Ռեցեպտիվ վարժություններն են.

- Gap-filling
- Questioning
- Completion

- Matching
- Guessing
- Translation
- Sentence formation

Բառապաշարի ուսուցման պրոդուկտիվ վարժություններ

Բառապաշարի դասավանդման մյուս եղանակն էլ պրոդուկտիվ վարժություններն են, որոնց նպատակն է զարգացնել սովորողների պրոդուկտիվ ունակությունները:

Պրոդուկտիվ վարժությունների տեսակներն են

- Repetition
- Inflection
- Replacement
- Restatement
- Completion
- Transposition
- Expansion
- Contraction
- Transformation
- Integration
- Restoration
- Using Pictures etc.

Gapfilling Exercises

Այս վարժությունները հիանալի միջոց են սովորողի բառապաշարը ընդլայնելու համար: Gap filling-ի էությունը կայանում է նրանում, որ տրված է ինչ-որ տեքստ, որի մեջ բաց են թողնված բառեր, որոնք էլ ըստ իրենց իմաստի պետք է դասավորվեն: Իհարկե Gap filling վարժությունները նույնպես կարող են ունենալ իրենց տարբերակները: Օրինակ ամենաբարդ տարբերակներում բաց թողնված բառերը տրված չեն: Ավելի հեշտ տարբերակներում բաց թողնված բառերը գրվում են տեքստի վերջում, իհարկե ոչ ճիշտ հերթականությամբ: Բայց այս դեպքում էլ կարելի է բառերը

դնել ուղիղ ձևով, կամ կարելի է տալ արդեն այն ձևով, որով այն պետք է օգտագործվի տեքստի մեջ: Բաց թողնված բառերը կարող են պատկանել տարբեր խոսքի մասերի:

Questioning Exercises

Հարցադրական վարժությունները օգնում են սովորողին մտածել և ճիշտ ձևով կազմել ու շարադրել իր միտքը օգտագործելով նոր սովորած և ամրապնդելով հին բառապաշարը: Այս վարժությունը իր մեջ ներառում է հարցերի հետևյալ տեսակները.

Multiple choice

True/false/don't know

Open-ended

Wh. Questions (e.g. who, why, what, where, etc.)

Multiple Choice վարժության էությունը կայանաում է նրանում, որ տրված նախադասության մեջ բաց է թողնված ինչ-որ բառ, իսկ նախադասության ներքևում տրվում են տարբերակներ, որոնց մեջ առկա է նաև ճիշտ տարբերակը: Այսինքն պահանջը կայանում է նրանում, որ պետք է ընտրել տրված տարբերակներից ճիշտը:

Completion

Այս վարժությունների իմաստը կայանում է նրանում, որ սովորողը պետք է լրացնի տրված անավարտ նախադասությունները՝ ամբողջացնելով իմաստը:

Matching

Այս վարժությունների նպատակը կայանում է նրանով, որ տրված են բառեր, որոնց դիմաց առաջադրվում են հոմանիշները կամ պարզապես բացատրությունը:

Ուսանողը պետք է գտնի և համապատասխանեցնի բառերը և իրենց հոմանիշները:

Համապատասխանեցնող վարժությունները բառապաշարի ուսուցման և

կառուցվածքի արդյունավետ միջոց է Անգլերեն լեզուն ուսուցնասիրելու համար:

Բառերը սովորելու համար այս վարժության ձևը շատ օգտակար է աշակերտներին սովորեցնելու համար:

Guessing

Այս վարժության իմաստը կայանում է նրանում, որ տրված է արտահայտություն կամ նախադասություն, որում բաց է թողնված համապատասխան բառը: Սովորողը պետք է կարողանա գուշակել ընդգծված բառերի իմաստը: Բնականաբար ոչ մեկը չի կարող ասել, որ գիտի բոլոր բառերը՝ նույնիսկ մայրենի լեզվում, սակայն կան բառեր, որոնք սովորողը չիմանալով ուղղակի գուշակում է, որը զարգացնելու համար սովորողը պետք է կատարի վարժություններ:

Translation exercises

Այս վարժության էությունը կայանում է նրանում, որ տրված են նախադասություններ, կամ ինչ-որ տեքստ և պահանջվում է մի լեզվից թարգմանել մյուսը: Տեքստերի թարգմանությունը օգնում է սովորողներին բազմաթիվ հնարքների՝ բառապաշարի զարգացմանը, մտքի ճիշտ շարադրանքին, նաև անձանոթ բառերը բառարանում փնտրելուն է օգնում, ինչպես գիտենք յուրաքանչյուր լեզու ուսումնասիրող պարտավոր է բառարանից օգտվելու կանոնները իմանալ

Sentence Formation exercises

Գոյություն ունի այս վարժության մի քանի տեսակ

Rearranging words — տրված են բառեր և անհրաժեշտ է դրանք դասավորել՝ նախադասություն ստանալու համար:

Using given words — տրված են մի քանի բառեր, և աշակերտից պահանջվում է այդ բառերն օգտագործել նախադասության մեջ:

Finding and correcting mistakes – Տրված են նախադասություններ, որոնք բառային առումով սխալներ են պարունակում: Աշակերտը պետք է գտնի և ուղղի սխալները:

Situational – Տրված է մի իրավիճակ, ըստ որի աշակերտը պետք է նախադասություններ կազմի:

Բառիմաստի բացահայտման ռազմավարություն

Մեթոդիկայում ընդունված են բառիմաստի բացահայտման երկու գլխավոր եղանակներ՝ ոչ լեզվական և լեզվական:

1. Ոչ լեզվական եղանակը ընդգրկում է առարկայական-պատկերավոր զննականություն, ուրն իր հերթին ներառում է.

- Առարկաներ, նկարներ, լուսանկարներ, գործողություններ և իրադրություններ, պատկերավոր դիաֆիլմերի ցուցադրում
- Դիմախաղ
- Ժեստեր

2. Լեզվական եղանակը արդեն ընդգրկում է տարբեր միջոցներ, ինչպես օրինակ

- Անձանոթ բառը օգտագործել որոշակի կոնտեքստի մեջ, որից պարզ կդառնա իմաստը
- Տալ բառի հականիշը
- Տալ տվյալ բառի հոմանիշը
- Կատարել բառակազմական վերլուծություն
- Բառիմաստի բացահայտում մայրենի լեզվով (ոչ թարգմանական)
- Բառիմաստի բացահայտում օտար լեզվով (թարգմանական)

Ինչպես գիտենք բառերը լինում են մենիմաստ և բազմիմաստ: Քանի որ բառերի մեծ մասը բազմիմաստ է բառապաշար սովորելիս բարդություն է առաջանում: Երբեմն մի բառին համապատասխանում է այլ լեզվում մի քանի բառ, տվյալ դեպքում պետք է ուշադրությունը կենտրոնացնել այդ բառերի միջև եղած տարբերությանը:

Որն է ամենաարդյունավետ ձևը բառապաշարը կազմելու համար

Աշակերտը պետք է հասկանա բառը և կարողանա օգտագործել այն: Մենք պետք է սկսենք բացատրելուց և հետո անցնել այն կիրառելուն: Ահա և ճիշտ ձևը: Օրինակ, աշակերտը սովորում է «Ugly» բառը , ամենալավ ձևը, որ կարող ես ստուգել բառի իմաստը՝ բառարանի գործածումն է: Այսպիսով գտնելով այն բառարանում փորձում ենք կիրառել այն բառակապակցության մեջ «ugly chicken»: Այնուհետև գործածում ենք այն նախադասության մեջ, իսկ ամենավերջում կիրառում ենք այն վարժությունների մեջ կամ խաղերի միջոցով փորձում ենք ավելի ամրապնդել սովորած բառը: Սակայն բառապաշարի ուսումնասիրության մեջ հաճախ օգտագործվում են բազմաթիվ սխալներ.

Աշակերտը պետք է հասկանա բառը և կարողանա օգտագործել այն: Մենք պետք է սկսենք բացատրելուց և հետո անցնել այն կիրառելուն: Ահա և ճիշտ ձևը: Օրինակ, աշակերտը սովորում է «Ugly» բառը , ամենալավ ձևը, որ կարող ես ստուգել բառի իմաստը՝ բառարանի գործածումն է: Այսպիսով գտնելով այն բառարանում փորձում ենք կիրառել այն բառակապակցության մեջ «ugly chicken»: Այնուհետև գործածում ենք այն նախադասության մեջ, իսկ ամենավերջում կիրառում ենք այն վարժությունների մեջ կամ խաղերի միջոցով փորձում ենք ավելի ամրապնդել սովորած բառը: Սակայն բառապաշարի ուսումնասիրության մեջ հաճախ օգտագործվում են բազմաթիվ սխալներ.

Բառապաշարի կառուցման **1**-ին սխալը. Սովորել միայն քննությունը լավ հանձնելու, միայն արդյունքի համար: Օրինակ անձը հաճախում է անգլերենի ուսուցման դասերի և սովորում է մի շարք բառեր: Սովորելով դրանք քննությունը լավ հանձնելու համար՝ արդյունավետ չէ, իսկ եթե Դուք սովորում եք այն որպես գիտելիք Դուք կհիշեք այն միշտ և կկարողանաք կիրառել այն Ձեր խոսքում: Այսպիսով ձեր նպատակը պետք է կենտրոնացված լինի, ոչ թե Ձեր քննության արդյունքի վրա, այլ իրական գիտելիքի և բառապաշարի զարգացման համար:

Բառապաշարի կառուցման **2**-րդ սխալը. Սովորում ենք բառը առանց նրա գործածության, այսինքն սովորելով բառը Դուք գրում եք այն Ձեր նոթատետրում 10 անգամ, արտաբերում եք 20 անգամ և թվում է Դուք փայլուն գիտեք այն, բայց դուք

չօգտագործելով այն չէք կարողանա օգտագործել այն խոսքում: Կարելի է նշել որ ոչ արդյունավետ է սովորել բառերը, բայց չօգտագործել և չկիրառել լեզվի մեջ:

Բառապաշարի կառուցման 3րդ սխալը. Գործածել բառը առանց լիարժեք հասկանալու այն: Կարելի է ասել, որ շատ քչերն են կարողանում գործածել նոր, անծանոթ բառերը խոսքի մեջ, սակայն մեծամասնությունը չի կարող այս կերպ սովորել բառերը: Անարդյունավետ է օրինակ՝ եթե դու ուսումնասիրում ես «chukubuku-» բառը չիմանալով բառի նշանակությունը, իմաստը և գործածման ձևը դու չես կարողանա ճիշտ գործածել այն (այս բառը հնարված բառ է): Այս ձևը շատ վատ միջոց է անծանոթ բառեր սովորելու համար:

Այսպիսով լեզվին տիրապետելու գործընթացը հիմնականում սկսվում է դպրոցից: Իհարկե բարապաշարի ուսուցման ձևի ընտրությունը կախված է մի քանի հանգամանքներից:

- սովորողի տարիք և նրա ընդունակություններ

(Շոգեբանական հանգամանք)

- Ուսուցանվողների մակարդակը

Դասարանի չափը

Ուսուցչի մասնագիտական որակները (Մանկավարժական հանգամանք)

- Կոնկրետ թե վերացական բառեր (Լեզվաբանական հանգամանք)

Գրականության ցանկ

1. Անգլերեն լեզու հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Երևան 2007թ.
2. Անգլերեն հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներ և ծրագրեր, Երևան 2009թ.
3. Teaching Knowledge Test TKT – Cambridge University Press
4. English Grammar – Oxford University Press
5. Մ. Աստվածատրյան <Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա>
6. <Օտար լեզուները Հայաստանում> գիտամեթոդական հանդես, 2014թ. հ.2 և հ.3
7. Ա. Մարգարյան և ուր. <Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա>
8. Зубанова О.В. “Английская грамматика в таблицах и упражнениях”, Москва 2008г.
9. Андросенко Т.Д. и др. “Английский язык 2-11 классы. Внеклассные мероприятия” Волгоград, 2011г.
10. Рогова – Методика иностранных языков
11. Сафонова В.П. “Современный урок иностранного языка”, Волгоград,
12. Արնաուդյան Ա. և ուր., Մասնագիտական զարգացման ձեռնարկ, Երևան, 2004թ.
13. Աստվածատրյան Մ. և ուր. Եվրոպական լեզվական թղթապանակ Հայաստանի դպրոցների տարրական դասարանների համար, Երևան, 2007թ.
14. Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնասիրություն, դասավանդում, գնահատում, Երևան, 2005թ.
15. ՀՀ Կրթության և գիտության նախարարություն. Տեղեկագրեր, 2014թ., 2015թ.
16. Սովորողների գնահատման հայեցակարգ, ՀՀ ԿԳՆ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2005թ.
17. Beane J.A. Curriculum Integration: Designing the Core of Democratic Education. New York, Language Portfolio: Primary School, Armenia. Yerevan, 2007

18. Անգլերեն ուսուցիչների հնգօրյա վերապատրաստումների ծրագիր և նյութեր, Երևան, Անտարես, 2008թ.
19. European Language Portfolio: Proposals for Development. Strasbourg, Council of Europe, 1997